AMERIABANK

MYAMERIA ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԻ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐՇԱՎԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Արշավի նպատակ	Ոչ հաշվետեր հաճախորդների ներգրավում, MyAmeria համակարգի խթանում
Արշավին մասնակցող հաճախորդներ	«Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) ոչ հաշվետեր հաճախորդներ (ներառյալ Բանկի հաճախորդ հանդիսացող ոչ հաշվետեր, այդ թվում՝ սահմանափակ իրավասություններով MyAmeria համակարգ ունեցող հաճախորդներ)
Արշավի գործողության ժամկետ	2026 թ. փետրվարի 11-ից մայիսի 11-ը ներառյալ
Արշավի նկարագրություն	Բանկի այն ոչ հաշվետեր հաճախորդները, ովքեր արշավի գործողության ընթացքում Բանկում կբացեն ընթացիկ հաշիվ, կպատվիրեն և կակտիվացնեն Visa տեսակի քարտ, ինչպես նաև կդառնան MyAmeria համակարգի օգտատեր (ամբողջական իրավասություններով) և մուտք կգործեն MyAmeria համակարգ՝ • արշավի գործողության ընթացքում MyAmeria համակարգով **նվազագույնը 1000 ՀՀ դրամ գումարի չափով (մեկ գործարքի շրջանակում) կոմունալ վճար այդ թվում՝ հեռախոսահամարի լիցքավորում (այսուհետ՝ վճար),** իրականացնելու դեպքում՝ իրականացված վճար/ներ/ի դիմաց հնարավորություն կունենան ստանալ առավելագույնը 2000 ՀՀ դրամ (առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերի) հետվճար իրենց՝ Բանկում բացված հաշվեհամարի և/կամ Visa տեսակի քարտի միջոցով: Արշավի գործողության ընթացքում հաճախորդի կողմից իրականացված վճար/ներ/ի դիմաց վերջինիս տրամադրվում է՝ • առավելագույնը 1000 ՀՀ դրամ (առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերի) հետվճար,

	• գործարքներից առնվազն մեկն **պարբերական հանձնարարականի** միջոցով իրականացվելու դեպքում **երկու վճարման** համար՝ առավելագույնը 2000 (յուրաքանչյուր գործարքի համար 1000-ական) ՀՀ դրամ (առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերի) հետվճար: Հետվճարներըհաճախորդներին կփոխանցվեն մինչև վճարման օրվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ՝ պայմանով, որ վճարման պահի դրությամբ հաճախորդը պետք է լինի գործող, քարտն ակտիվ, պարբերական վճարման դեպքում նաև պարբերականն ակտիվ ու վճարումը հաջողությամբ կատարված: Հետվճարների հաշվարկի իրականացման պատասխանատու՝ Թվային ուղիների կառավարման թրայբ:
Արշավի բյուջեի բաշխում	Արշավով նախատեսված գումարը վճարվելու է VISA Inc. ընկերության կողմից տրամադրված բյուջեի հաշվին: